պաշտօնեայս և սիրելի Ազգիս Մերում զրաՆիրուն ուսուցիչս։

Պարտ է Ձեզ փոյթ մեծ ունել և խնամով առնել զընտրութիւն պաշտօնէից ճեմարանին, և-ս և աշակերտաց թէ ի հնոցն և թէ յորոց ցանկասցեն ի նորոյ մտանել, այնպէս զի ամենեքին նոքա համակերպեալ իցեն ըստ ամենայնի վսեմ կոչման Գէորգեան Հոգևոր ճեմարանիս։

Զայսպիսի պարտիս գնելով Մեր ի վերայ Ձեր՝ զՁեզ ունիմք համաձայն կանոնադրութեանն ճանաչել պատասխանատու առաջի Մեր վասն բարեկարգութեան և յառաջադիմութեան ճեմարանին ըստ ամենայն մասանց, ըստ այսմ և ամենայն պաշտօնեայք ճեմարանին զոլով ըստ կանոնադրութեանն ստորադասեալ Ձեզ՝ զտանին պատասխանատու առաջի Ձեր։ Իսկ յորոշեալն զթիւ աշակերտաց՝ ունիցես ի նկատի որպէս զառողջապահական հանգամանս և զյարմարութիւնս շինուածոց ճեմարանին նոյնպէս և զնախահաշիւ ծախուց նորին։

Եւ Մեք աղօթս առնեմք, զի շնորհաց Հոգին Սուրբ օժանդակ լիցի Ձեզ և յաջողեսցէ ի ծանր պաշտամանդ այդմիկ։

Ողջ լերուք ի Տէր։

Ի 21 Յուլիսի 1894 (Սոսրաֆիրեան)

Եւ ըստ տոմարիս Ռ.ՅԵԳ ՄԿՐՏԻՉ ԿԷԹՈՒՂԻԿՈՍ

Համար 1095 ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Յայրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ի Վաղարշապատ։

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Յուլիս 6։ Աստրախանի Հայոց կոնսիստորեայն ապրիլի 13-ին յայտնեց թէ՝ Սերովբէ աւագ քահանայ Լազարեանց Արմաւիրի մօտ ընկնելով երկաթուղու տակ, վախճանուել է. և այժմ նորա անչափահաս երեք զաւակը Իւրեանց մօր հետ գտնուումեն Ս. Պետերբուրգ. Սինօդն պատուիրեց նոյն կոնսիստորիային տալ հանգուցեալ Սերովբէ քահանայի երիցուհուն և նորա զաւակներին տարեկան 60 բուրլի թեմին հոգևորականաց որրոց և այրեաց Գանձարանից և 140 ր. եկեղեցիներից ընդ ամենը 200 ր. ի սնունդ նոցա։

—

Յուլիս 6։ Երևանի Կոնսիստորիայի միջնորդութեան համեմատ Սինօդը պատուիրեց Արթիկցի Ռուբէն քահանայ Տէր Գրիգորեանը փոխադրել Կարս քաղաք հանգուցեալ Սարգիս քահանայ Բզնունու տեղը ժողովուրդը հովուելու։

—

Յուլիս 13։ Արքազնագոյն Հայրապետի բանաւոր պատուէրի համեմատ Սինօդը վկայական տուեց Մայր Աթոռի Միաբան Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանին Պարիզ գնալու համար։

—

Յուլիս 18։ Սինօդը թոյլ տուեց Կարսի Հոգևոր կառավարութեանը շինել եկեղեցի Կաղզուան գաւառի Բաղրան գիւղում։

—

Յուլիս 18։ Սինօդը Բարձրագոյն թոյլտուութիւն ստանալուց յետոյ՝ պատուիրեց Տփխիսի Հայոց Կոնսիստորիային ընդունել Լիանոզեանց եղբարց Գէորգի և Ստեփանոսի նուիրած տունը, որ արժէ 10,000 բուրլի և հաստատել կալուածագիրը Սղնախ քաղաքի Ս. Կարապետ եկեղեցւոյ անունով։

—

Յուլիս 18։ Սինօդը պատուիրեց Տփխիսի Կոնսիստորիային ընդունել Գէորգ քահանայ Դալստեանցի ընծայած տունը, որ արժէ 300 բուրլի և հաստատել կալուածագիրը վանաց աւագ եկեղեցւոյ անունով։

—

Յուլիս 18։ Սինօդը մերժեց Աստրախանի Կոնսիստորիայի միջնորդութիւնը Ս. Խաչ քաղաքի Գէորգ քահանայ Տէր Մելքիսեդեկեանցին, Արմաւիրցի Գալուստ աւագ քահանայ Դաւթեանցին և Ղզլարեցի Գրիգոր քահանայ Իւղբաշեանցին տաք ջրեր գնալու համար ի դիւա առողջութեան, որովհետև այն քահանաների հիւանդութեան համար չէին մատուցուած օրինաւոր վկայականներ։

—